

Գևորգ Դ-անիելյան
*ՀՀ Սահմանադրական դատարանի խորհրդակցական
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Նախաբան: Իրավունքների և ազատությունների սահմանափակման էությանն անդրադառնալիս մեծամասամբ որպես հետազոտման նյութ է ընտրվում «սահմանափակում» եզրույթի իրավական արժեքի, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների սահմանափակման հիմքերի համակողմանի բացահայտումը: Չնսենացնելով այդպիսի մեթոդաբանության գիտագործնական արժեքը, այնուամենայնիվ, գտնում եմ, որ հետազոտման նյութն առնչվում է նաև մի շարք այլ տեսական հարցադրումների հետ, որոնց համալիր վերլուծությունն անխուսափելիորեն կնպաստի իրավունքների և ազատությունների սահմանափակման արդի հիմնախնդիրների հիմնավորված լուծմանը:

Իրավունքների և ազատությունների սահմանափակման իրավական իմաստի բացահայտման համար էական նշանակություն ունեն հետևյալ հարցադրումները՝ ա) ինչպե՞ս են փոխհարաբերվում իրավունքի և ազատության սահմաններն ու սահմանափակումները, բ) իրավունքի ու ազատության սահմանափակումը ի՞նչ իրավական պարտավորություններ է առաջացնում անձի և պետության համար, գ) ի՞նչ իրավական նշանակություն ունի իրավունքների և ազատությունների իրականացման կարգը՝ իրավունքների սահմանափակման տեսանկյունից, դ) ինչպիսի՞ իրավական արժեք ունի անձի կամահայտնությունը՝ իր իրավունքների և ազատությունների սահմանափակման հարցում և ե) որքանո՞վ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն (այսուհետ՝ Սահմանադրություն) իրավունքների և ազատությունների սահմանափակման չափանիշներով համապատասխանում միջազգային իրավունքի սկզբունքներին:

Նկատենք, որ այս հարցադրումներն անջրպետված չեն արդեն իսկ գիտական հետազոտությունների համար ընդունված չափանիշներից, մոտեցումներից ու հարցադրումներից, պարզապես միտված են դրանք առավել համալիր դարձնելուն:

Իրավական հիմքերը: Որպես կանոն, իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմքեր են ճանաչվում հիմնական օրենքների այն հիմնադրույթները, որոնք ուղղակի ամրագրում են սահմանափակման ենթակա հոդվածները (առանձին դեպքերում դրանք չեն էլ սահմանվում, իսկ սահմանափակումներն իրականացվում են օրենքներով՝ Սահմանադրությամբ ամրագրված կարգով ու չափանիշներով), կամ սահմանում են այն իրավական ռեժիմները, որոնց դեպքում թույլատրվում են սահմանափակումներ նաև ենթաօրենսդրական ակտերով: Լավագույն դեպքում դրանց շրջանակն ընդլայնվում է պարտականություն և պատասխանատվություն սահմանող նորմերի ընդգրկմամբ¹:

Կարծում են, իրավունքների և ազատությունների սահմանափակմանն առնչվում են նաև մի շարք այլ սահմանադրական նորմեր, որոնք գուտ խմբագրական կտրվածքով, թեպետ չեն պարունակում «սահմանափակում» եզրույթը, սակայն իրենց բովանդակությամբ որոշակիորեն հանգեցնում են այդպիսի սահմանափակումների: Այդպիսին է, օրինակ՝ Սահմանադրության 12-րդ հոդվածով պետական լեզվի մասին ամրագրված դրույթը, որը հայերենը հռչակում է, որպես պետական լեզու: Սահմանադրական կարգի հիմունքների բաղադրիչ հանդիսացող հիշյալ հիմնադրույթը ուղեկցվում է ընթացիկ օրենսդրության այնպիսի իրավական ընթացակարգերով, որոնք հանգեցնում են անձի իրավունքների որոշակի սահմանափակումների: Դրանք, հատկապես, դրսևորվում են խախտված իրավունքների պաշտպանությանն առնչվող Սահմանադրության 18-21-րդ հոդվածներով նախատեսված իրավունքներից օգտվելիս:

Բնականաբար, դատավարական և վարչարարությունը կարգավորող օրենքներով փորձ է արվել մեղմելու լեզվին չտիրապետող անձանց կարգավիճակը, սակայն ակնհայտ է, որ իրենց նշված իրավունքներն իրականացնելիս պետական լեզվին չտիրապետող անձինք հարկադրված են ենթարկվելու այնպիսի ընթացակարգերի, որոնք անխուսափելիորեն հանգեցնում են նույն այդ իրավունքների սահմանափակմանը: Ընդ որում, օրենսդրության խնդիրը տվյալ դեպքում այն է, որ որոշակի ընթա-

¹ Տե՛ս, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի./ - Եր.: «Իրավունք», 2010, 508-509 էջեր:

ցակարգերի արդյունքում չխաթարվի մարդկանց իրավահավասարության սկզբունքը:

Պետական լեզվին վերաբերող կամ նմանաբնույթ այլ հիմնադրույթները մենք բնավ խոցելի չենք համարում. դրանք սահմանադրական կարգի անհրաժեշտ տարրեր են, սակայն գտնում ենք, որ դրանք ևս անխուսափելիորեն հանդիսանում են իրավունքների և ազատությունների սահմանափակման յուրահատուկ հիմքեր: Ի դեպ, նկատենք, որ այդ նորմերի և Սահմանադրության 43-րդ հոդվածի միջև հակասություններ չկան, քանզի 43-րդ հոդվածով բացառապես ամրագրված են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք որոշակի *չափանիշներով* կարող են սահմանափակվել *օրենքով*, ինչը չի բացառում, որ այլ իրավունքներն ու ազատությունները սահմանափակված լինեն հենց Սահմանադրությամբ:

Սահմանադրության բազմաթիվ այլ հոդվածներ բովանդակում են վերը նշված բնույթի սահմանափակումներ. խոսքը վերաբերում է նաև նույն 18-21-րդ հոդվածներին: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածը ամրագրում է գործի հրապարակալին քննության բացառությունները և այլն:

Իրավունքի և ազատության սահման ու սահմանափակում: Եվ այսպես, անցնենք մեր կողմից առաջադրված առաջին հարցին՝ իրավունքի և ազատության սահմանների ու սահմանափակման փոխհարաբերությանը:

Իրավական իմաստով իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը պայմանականորեն երկուսն են՝ ա) այլոց իրավունքների ու ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանությունը և բ) հանրային շահերի՝ ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանությունը, հանցագործությունների կանխումը, հանրության առողջությունն ու բարոյականությունը: Այս հիմքերը հանգամանորեն ամրագրված են ինչպես միջազգային իրավունքի աղբյուրներում (ինչպես օրինակ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան), այնպես էլ ՀՀ Սահմանադրությամբ (43-րդ հոդված):

Մյուս կողմից, էլ ավելի ընդգրկուն չափանիշներով իրավունքների և ազատությունների սահմանափակումներ են նախատեսված կոնկրետ անձի համար պարտականություն սահմանելու եղանակով, ինչը բացա-

ռում է Սահմանադրությամբ կամ որևէ օրենսդրական ակտով նախապես իրավունքների կոնկրետ սահմանափակումներ ամրագրելը: Այսպես, Սահմանադրության 47-րդ հոդվածը յուրաքանչյուրի պարտականությունն է հռչակում Սահմանադրությունը և օրենքները, այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը պահպանելը, սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու կամ պատերազմ քարոզելու նպատակով իրավունքները և ազատություններն օգտագործելը:

Այս իրավական կարգավորումների ներքին տրամաբանությունը հուշում է, որ իրավունքներից ու ազատություններից օգտվելու սահմանափակումներից զատ իրավական առանցքային արժեք ունեն մաս դրանց սահմանները: Ի տարբերություն սահմանների՝ *իրավունքի և ազատությունների սահմանափակումներն անմիջականորեն առնչվում են դրանց իրականացման կարգին*: Այլ կերպ ասած, սահմանափակումների արդյունքում այս կամ այն չափով իրավունքների ու ազատությունների իրականացումը փոխկապակցում է որոշակի ընթացակարգերի հետ:

Բոլորովին այլ իրավական արժեք ունեն սահմանները. *վերջիններս որևէ ընթացակարգ չեն ենթադրում, պարզապես պարտավորեցնում են որոշակի սահմաններում ամբողջությամբ ձեռնպահ մնալ կոնկրետ իրավունքներից ու ազատություններից*: Բնորոշ է, որ սահմանները դրսևորվում են կոնկրետ արգելքներ կամ պարտականություններ սահմանելու եղանակով: Սահմանների դեպքում իրավունքի որոշակի դրսևորումը արգելվում է ընդհանրապես՝ անկախ դրա իրականացման ընթացակարգից: Մասնավորապես, այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության 43-րդ հոդվածի իմաստով սահմանափակման հիմք է, իսկ արդեն 47-րդ հոդվածի իմաստով՝ կանխորոշում է իրավունքի ու ազատության իրականացման սահմանները:

Հավելենք, որ «սահման» եզրույթն առ այսօր իրավագետների կողմից օգտագործվել է վերջինիս իրավափիլիսոփայական իմաստով¹, մինչդեռ իրավագիտության շրջանակներում այն, մեր համոզմամբ, ձեռք է բերում փիլիսոփայական բովանդակությունից էապես տարբերվող, բացառապես իրավական իմաստ ու նշանակություն:

¹ Տե՛ս, օրինակ, Денхофф М., Границы свободы: капитализм должен стать цивилизованным. М.: МО, 2001, էջ 75-77., Закария Ф., Будущее свободы: нелиберальная демократия в США и за их пределами / Пер. с англ. М.: Ладомир/, 2004, էջ 126-127:

Այսպիսով, նպատակահարմար է վերը նշված չափանիշներով սահմանագատել իրավունքների և ազատությունների սահմանները՝ իրավունքների և ազատությունների սահմանափակումներից, ինչը կունենա որոշակի գիտագործնական նշանակություն ինչպես դրանց համարժեք ընկալման, այնպես էլ իրավաստեղծ ու իրավակիրառ ոլորտներում:

Իրավունքների ու ազատությունների սահմանափակման առնչությամբ պետության և անձի պարտավորությունները: Այս հարցադրումը սերտորեն առնչվում է իրավունքների ու ազատությունների սահմանափակման ու սահմանների տարանջատման հարցի հետ: Խնդիրն այն է, որ սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական սահմանափակումներն անմիջականորեն պարտավորություն են առաջացնում պետության համար, մինչդեռ սահմանների վերաբերյալ սահմանադրական դրույթներն ուղղակիորեն վերաբերում են անձանց, մասնավորապես վերջիններիս համար նախատեսում են պարտականություններ:

Իհարկե, ասվածը չի բացառում, որ սահմանադրական սահմանափակումները որևէ կերպ անմիջականորեն պարտականություն չեն առաջացնում անձանց համար կամ սահմանները՝ պետության համար, պարզապես տվյալ դեպքում խոսքը դրանց անմիջական ուղղվածության մասին է:

Մասնավորապես, Սահմանադրության 43-րդ հոդվածն ուղղակիորեն չի սահմանում իրավունքների ու ազատությունների սահմանափակումներ, պարզապես որոշակի հիմքերի առկայության դեպքում այդպիսիք սահմանելու լիազորություն է վերապահում օրենսդիր մարմնին: Այսինքն՝ հիշյալ դրույթը անմիջականորեն պարտականություններ չի առաջացնում անձանց համար. քանի դեռ օրենքով անձի իրավունքներն ու ազատությունները չեն սահմանափակվել, յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն օգտվել Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով նախատեսված իր իրավունքներից ու ազատություններից: Ընդ որում, ասվածը բխում է նաև Սահմանադրության 42-րդ հոդվածով ամրագրված հետևյալ հիմնադրույթից. «Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները, ազատությունները» (2-րդ մաս): Միաժամանակ այս հիմնադրույթները կանխորոշում են այլոց իրավունքները և ազատությունները հարգելու սահմանադրական արտականության բովանդակությունը:

Անձի համար պարտականություններ են ծագում միայն այն սահմանադրական դրույթներով, որոնք այդպիսիք ուղղակիորեն ամրագրում

են: Այդպիսին է Սահմանադրության 47-րդ հոդվածով ամրագրված հետևյալ դրույթը. «Յուրաքանչյուր որ պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը: Արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով»: Բնական է, որ հիշյալ իրավական նորմը որոշակի պարտավորություններ է առաջացնում նաև օրենսդիր մարմնի համար, քանզի վերջինս պարտավոր է համապատասխան օրենքներով ապահովել այդ նորմի բնականոն կիրառումը, ինչը կարող է կատարվել համապատասխան պատասխանատվություն սահմանելու, այլոց իրավունքների խախտումների դիսպոզիտիվ հատկանիշները նախանշելու և նմանաբնույթ այլ եղանակներով:

Ընդ որում, հատուկ շեշտում ենք, որ հիշյալ խնդրի լուծումը դրված է հենց օրենսդիր մարմնի առջև, քանզի Սահմանադրության 83.5-րդ հոդվածի համաձայն՝ նշված հարցերը կարող են սահմանվել բացառապես ՀՀ օրենքներով: Տվյալ դեպքում նկատի ունենք այն, որ խոսքը վերաբերում է իրավունքների իրականացման և պաշտպանության պայմաններին ու կարգին:

Այս հարցադրման առնչությամբ հստակ իրավական դիրքորոշումների անհրաժեշտությունը թելադրված է մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությամբ՝ նաև միջազգային դատական ատյաններում: Վերջին հաշվով, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային դատական համակարգը կարող է արդյունավետ գործել միայն այն ժամանակ, երբ կանխատեսելի ու ընկալելի են մարդու կարգավիճակի առնչությամբ պետության միջամտության իրավական հիմքերը, սահմանները և եղանակները: Այս խնդրի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ միջազգային հանրությունը վաղուց արտասովոր չի համարում անձամբ մարդու կողմից միջազգային դատական ատյան դիմելու ինստիտուտը: Նկատենք, որ դրա կայացումը դյուրին ու հարթ ճանապարհ չի անցել: Բնորոշ է այն, որ Ֆրանսիան իր քաղաքացիների համար այդ իրավունքը ճանաչել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային միանալուց միայն 30 տարի անց¹: Ընդ որում,

¹ Տե՛ս Աբաшидзе А.Х., Алисиевич Е.С., Право Совета Европы. Конвенция о защите прав человека и основных свобод: - М.: Междуар. отнишения, 2007, с. 34-35.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր առաջին որոշումը կայացրել է 1961թ. ապրիլի 7-ին՝ Լուդեսն ընդդեմ Իռլանդիայի գործով¹:

Իրավունքների և ազատությունների իրականացման կարգը, որպես սահմանափակման դրսևորում: Ինչպես արդեն նշեցինք, իրավունքների և ազատությունների սահմանափակումն առնչվում է դրանց իրականացման կարգին, մասնավորապես Սահմանադրությամբ ամրագրված չափանիշներին համապատասխան օրենքով սահմանվում են այնպիսի ընթացակարգեր, որոնք որոշակիորեն սահմանափակում են իրավունքներն ու ազատությունները՝ դրանով իսկ երաշխավորելով հանրային շահերի պաշտպանությունը: Սակայն, մեր կարծիքով, իրավունքների և ազատությունների իրականացման կարգը ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ ընթացիկ օրենսդրությամբ համարժեք մեկնաբանությամբ արտացոլված է:

Այսպես, դեռևս 2002թ. ապրիլի 3-ին ընդունված «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում առանձնացվեցին այն հարցերը, որոնք պետք է բացառապես օրենքով կարգավորվեն: Ընդ որում, այդպիսին համարվեցին նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների իրականացման պայմաններն ու կարգը (նշված օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետ): Գրանով իսկ օրենսդիրը որդեգրեց այն երակետային դիրքորոշումը, ըստ որի՝ իրավունքների իրականացման պայմաններն ու կարգը անվերապահորեն հանգեցնում են իրավունքների սահմանափակման, ինչը չի կարող կատարվել ենթաօրենսդրական ակտերով:

Հետագայում այս դրույթը նույնությամբ իր ամրագրումն ստացավ արդեն 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով փոփոխված Սահմանադրության 83.5 հոդվածով. «Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ 1) ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմաններն և կարգը» (1-ին կետ):

Նշված իրավական դրույթը խոցելի ենք համարում մի շարք նկատառումներով: Նախ, անհասկանալի է, թե ինչու են առանձնացվել բացառապես *իրավունքներն* իրականացնելու և պաշտպանելու պայմաններն ու կարգը, մի՞թե ազատությունների պարագայում խնդիրն այլ է: Առավել սկզբունքային նշանակություն ունի այն, որ իրավունքների իրա-

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1961թ. ապրիլի 7-ի Լուդեսն ընդդեմ Իռլանդիայի թիվ 332/57 գանգառի գործը (www.echr.coe.int/echr/):

կանացման կարգն ու պայմաններն ինքնըստինքյան չեն հանգեցնում այդ իրավունքների սահմանափակման, իսկ բազմաթիվ դեպքերում դրանք ունենում են ճիշտ հակառակ դերակատարումը: Ավելին, իրավունքների և ազատությունների իրականացման պայմաններին ու կարգին առնչվող հարաբերությունները հնարավորինս արագ կանոնակարգելը բխում է հենց անձի իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությունից:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ իրավունքների և ազատությունների իրականացման կարգն ու պայմանները կարող են բացառապես սահմանվել օրենքով միայն այն դեպքում, երբ դրանք բովանդակում են որևէ իրավունքի կամ ազատության կոնկրետ սահմանափակում:

Հավելենք նաև, որ ցանկացած այլ պետության սահմանադրությունում ամրագրված չէ իրավունքների իրականացման պայմաններն ու կարգը բացառապես օրենքով սահմանելու վերաբերյալ որևէ դրույթ:

Անձի կամահայտնության իրավական նշանակությունն իրավունքների և ազատությունների սահմանափակման հարցում: Իրավունքների և ազատությունների սահմանափակման հարցում անձանց կամահայտնությունը սահմանադրական իրավունքի մասնագետների կողմից համեմատաբար սակավ հետազոտված հարցադրումներից է: Այն գրեթե ամբողջությամբ անտեսված է նաև ուսումնական ձեռնարկներում ու դասագրքերում: Մինչդեռ այդ հարցն ունի խիստ գիտագործնական նշանակություն, իսկ դրա առնչությամբ բավարար հետազոտությունների բացակայությունը հանգեցրել է ոչ իրավաչափ օրենսդրական ակտերի ընդունմանը և խոցելի դարձրել նաև իրավակիրառ գործունեությունը:

Իհարկե, առանձին իրավունքների պարագայում անձի կամահայտնության խնդիրը բավականին խորը հետազոտության նյութ է դարձել (օրինակ՝ կյանքի իրավունքը), սակայն խոսքը տվյալ դեպքում է վերաբերում ընդհանրապես իրավունքների և ազատությունների սահմանափակման հարցում անձի կամահայտնության իրավական նշանակությանը: Նշված հարցադրման առնչությամբ ոչ բավարար հետազոտությունների բացակայության պայմաններում իրավական մշակույթում տիրապետող է դարձել այն դիրքորոշումը, ըստ որի՝ անձի կողմից իր իրավունքներից կամ ազատություններից հրաժարվելը բավարար հիմք է նրան այդ իրավունքներից ու ազատություններից զրկելու համար:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածը հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու հիմք է ճանաչել նաև կողմերից մեկի հղումը՝ տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը, եթե արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել (3-րդ կետ): Կարծում ենք, որ քաղաքացիաիրավական գործարքով անձի՝ իր խախտված իրավունքը դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքը սահմանափակվել չի կարող, բոլոր դեպքերում Մահմանադրությունը բացառում է այդ հիմքով հիշյալ իրավունքը սահմանափակելը: Ընդ որում, առավել անհիմն է օրենսդրի այն դիրքորոշումը, ըստ որի՝ նախկինում տրված համաձայնությունը բացառում է դատարան դիմելը նաև այն դեպքում, երբ անձը փոխում է իր մտադրությունը և որոշում է օգտվել իր սահմանադրական իրավունքից:

Հարկ է նկատել նաև, որ առանձին իրավունքներ չեն կարող սահմանափակվել անգամ դրա առնչությամբ իր կողմից հստակ արտահայտված համաձայնության դեպքում: Դրա վառ օրինակը կյանքի իրավունքն է, սակայն նույն իրավական չափանիշը գործում է նաև մի շարք այլ իրավունքների ու ազատությունների պարագայում: Այսպես, Մահմանադրության 33-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի հանգստի իրավունքը, միաժամանակ նախատեսելով, որ առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամսյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը պետք է սահմանվի օրենքով: Հարց է ծագում. կարո՞ղ է արդյոք գործատուն աշխատողի համաձայնությամբ զրկել նրան հանգստի իրավունքից, այն է՝ արձակուրդից, թեկուզ և դրա դիմաց փոխհատուցում վճարելու պայմանով: Հարցի պատասխանը թելադրված է հենց նույն հոդվածի բովանդակությամբ. Մահմանադրության նշված դրույթը միանշանակ է և բացառում է որևէ վերապահում:

Այս դիրքորոշումն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 166-րդ և 167-րդ հոդվածներով (այսինքն՝ արձակուրդից հետ կանչված անձին տրվում է արձակուրդ՝ չօգտագործված օրերի քանակով), ինչը ողջունելի է, սակայն մտահոգողն այն է, որ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2009թ. պաշտոնական շրջանառության մեջ է դրվում հիշյալ օրենսդրական երաշխիքները բացառող մի օրինագիծ, ըստ որի՝ արձակուրդից հետ կանչված անձին իր համաձայնությամբ կարող է տրամադրվել դրամական վճարում: Տվյալ օրինագիծը արժանացել է ՀՀ արդարադատության նախարարության բացասական եզ-

րակացութեանը, ինչն էլ և պայմանավորել է այն շրջանառությունից հանելը¹:

Առավել մտահոգող է իրավակիրառ պրակտիկան, մասնավորապես ոչ թե օրինաչափության, այլ բացառության է վերածվել հատկապես պետական կառավարման համակարգում քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, դատախազության պատասխանատու պաշտոնյաներին, հատուկ պետական ծառայողներին և այլոց, օրենքով սահմանված կարգով ու ժամկետներով արձակուրդ տալը: Նույն կերպ համատարած է դարձել չվճարվող արտաժամյա աշխատանքը: Ցավոք, այս գործելաոճը դիտարկվում է իբրև «նվիրվածություն» ու կարգապահություն:

Իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանադրական չափանիշների համապատասխանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին: Այս հարցը չափազանց տարրդունակ է, ուստի նպատակահարմար ենք համարում առանձին հոդվածների վերլուծությամբ առանձնացնել դրան առնչվող առավել բնորոշ հիմնահարցերը: Ինչևէ, իրավահամեմատական հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս համապարփակ տեսքով ներկայացնելու միջազգային իրավունքի չափանիշների հետ անհամապատասխանության, ինչպես նաև իրավական մշակույթի անկատարությամբ պայմանավորված Սահմանադրության հիմնադրույթները գործող օրենսդրությունում ոչ համարժեք արտացոլելու հետևյալ հիմնահարցերը.

ա) Միջազգային վավերացված պայմանագրերից վերցված առանձին հիմնադրույթներ տեղ են գտել անհարկի սխալ թարգմանությամբ, ինչն անընդունելի է ինչպես իրավաստեղծ և իրավակիրառ բնականոն գործունեություն, այնպես էլ պատշաճ իրավական մշակույթ ապահովելու տեսանկյունից: Այսպես, Սահմանադրության 19-րդ հոդվածով դատաքննության հրապարակայնության սկզբունքն ամրագրված է ակնհայտ ոչ իրավաչափ դրույթներով: Անդրադառնալով դատավարության փուլում լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների իրավունքներին՝ նշված հոդվածը սահմանում է հետևյալը. «Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադա-

¹ Տե՛ս ՀՀ կառավարության էլեկտրոնային կայք-էջի արխիվայի 2009թ. նյութերը (www.gov.am):

տության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների *մասնակցությունը* (ընդգծումը մերն է) դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել»:

Ակնհայտ է, որ լրատվության միջոցները կամ հասարակության ներկայացուցիչները ոչ թե *մասնակցում*, այլ *ներկա են գտնվում* դատավարությանը, քանզի վերջիններս դատավարության մասնակիցներ չեն: Խորհրդային իրավական համակարգում գործում էր, այսպես կոչված, հասարակական մեղադրողի ինստիտուտը, ինչը գործնականում հենց հասարակության ներկայացուցչի մասնակցությունը հավաստող փաստ էր, սակայն հարկ է նկատել, որ արդարադատության արդի ժողովրդավական սկզբունքները անվերապահորեն բացառում են մասնակցության այդպիսի խեղաթյուրված ինստիտուտները:

Հավելենք, որ Սահմանադրության նշված դրույթի հիմքում ոչ թե դրված է տրամաբանությունը, այլ ինչպես արդեն նշեցինք, ակնհայտ անհամարժեք, սխալ թարգմանության արդյունք է: Նշված դրույթը, բացառությամբ մեր կողմից արձանագրված սխալի, ամբողջությամբ գրեթե տառացիորեն կրկնում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված նորմը. «Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության *ներկայությունը* (ընդգծումը մերն է) կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»¹:

Դժվար չէ նկատել, որ համարժեք չէ թարգմանված նաև «հանրություն» եզրույթը, մասնավորապես այն իր բովանդակությամբ չի կարող համապատասխանել «հասարակության ներկայացուցիչներ» եզրույթին:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Երևան 2007, հրատարակվել է Հայաստանում «Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի» կողմից պատրաստված տարբերակով:

Նկատի ունենք այն, որ դատավարությանը մասնակցում է ոչ թե հասարակության որևէ եղանակով ընտրված կամ նշանակված ներկայացուցիչ, այլ ցանկացած անձ:

բ) Առանձին դեպքերում հիմք է ընդունվել բացառապես ներպետական օրենսդրությամբ ձևավորված յուրահատուկ իրավական ինստիտուտների համակարգը, ինչը սակայն չի համապատասխանեցվել միջազգային իրավունքի չափանիշների հետ: Օրինակ՝ նվիրված են անձի համար պատասխանատվություն սահմանող, նրա վիճակը որևէ կերպ վատթարացնող օրենքների հետադարձ ուժին առնչվող հարաբերությունների կարգավորմանը Սահմանադրության 22-րդ և 42-րդ հոդվածների միջև, որոնք արտաքուստ առկա է անընդունելի ներքին հակասություն:

Այսպես, Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ» (5-րդ մաս): Ինչպես տեսնում ենք, Սահմանադրությունը նշված իրավական նորմով միանշանակ ու անվերապահորեն այն իրավական դիրքորոշումն է ամրագրում, ըստ որի՝ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ: Սակայն երբ այս նորմը համադրում ենք նույն խնդրի իրավական կարգավորմանը նվիրված Սահմանադրության 42-րդ հոդվածում ամրագրված նորմին, ապա ակնհայտ է դառնում, որ գործ ունենք նվազագույնը ներքին հակասություն հետ. «Անձի վիճակը բարելավող, *նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող* (ընդգծումը մերն է) իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով» (4-րդ մաս):

Անվիճելի է, որ «պատասխանատվություն» եզրույթն իր բովանդակային իմաստով ընդգրկում է ինչպես քրեական պատիժը, այնպես էլ ցանկացած այլ իրավախախտման համար համապատասխան սանկցիաները, ուստի անհասկանալի է, թե ինչ նկատառումներով է մի դեպքում նույնաբնույթ օրենքի հետադարձ ուժը համարվել անվերապահ, իսկ մեկ այլ դեպքում՝ այն փոխկապակցվել է այդ իրավական ակտում հետադարձ ուժը հատուկ նախատեսելու հետ:

Ի դեպ, պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենսդրական ակտերի հետադարձ ուժը այս կամ այն նախապայմանի հետ փոխկապակցելը բնորոշ չէ որևէ պետության սահմանադրությանը: Կարելի է ենթադրել, որ Սահմանադրության 42-րդ հոդվածում նկատի է ունեցվել ոչ թե քրեական պատասխանատվությունը, այլ՝ վարչական

պատասխանատվությունը, որի առկայությունը մեր իրավական համակարգի առանձնահատկություններից է: Այս երկու իրավասխատուները (համապատասխանաբար՝ քրեական հանցագործություններ և քրեական զանցանքներ) բազմաթիվ երկրներում զետեղված են բացառապես քրեական օրենսգրքում, և դրանց համար նախատեսված է միայն քրեական պատասխանատվություն: Այդ հիմքով էլ նշված երկրները կարիք չունեն պատասխանատվությունը վերացնող օրենքի հետադարձ ուժի հարցում երկակի չափանիշներ կիրառելու:

Կարծում եմ, որ վարչական պատասխանատվության ինքնուրույն ինստիտուտի առկայությունը բնավ հիմք չէ, որպեսզի մեր Սահմանադրությունում հիշյալ հարցի առնչությամբ նախապատվությունը տրվեր երկակի չափանիշների կիրառմանը: Ողջունելի է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008թ. ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշմամբ ևս ամրագրել է օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ միասնականությունը ինչպես քրեական, այնպես էլ վարչական պատասխանատվության դեպքում, սակայն, այնուամենայնիվ, մտահոգող է, որ Սահմանադրությունն բովանդակում է անհարկի ներքին հակասություններ, ինչը գործնականում ընկալվում է ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ որոշմանը հակասող:

Հարցադրումը իր հստակ ու սպառիչ իրավական կարգավորումն է ստացել նաև միջազգային իրավունքի աղբյուրներում, որտեղ օգտագործված են բովանդակությամբ առավել ընդհանուր եզրույթներ՝ «իրավասխատու», «պատասխանատվություն» և, ըստ այդմ էլ, հավասարապես վերաբերում են բոլոր տեսակի պատասխանատվություն վերացնող կամ մեղմացնող օրենսդրական ակտերին¹:

Այսպիսով, առավել հիմնավորված լուծումը, մեր կարծիքով, ոչ թե այն է, որ նաև Սահմանադրության 42-րդ հոդվածում ամրագրվեր պատասխանատվությունը սահմանող կամ խստացնող օրենքի հետադարձ ուժը բացառելու մասին դրույթ, որպեսզի այդ հոդվածում ապահովվեր իրավական կարգավորման ամբողջականությունը (հեղինակները նկատի ունեն այն, որ նշված 42-րդ հոդվածում անդրադարձ կա միայն պատաս-

¹ Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (11-րդ հոդված), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (7-րդ հոդված) և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (15-րդ հոդված):

խանաավությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերին)¹, այլ ընդհանրապես բացառվեր երկակի չափանիշների օգտագործումը:

գ) Իրավունքների սահմանափակման հիմքերի ոչ համարժեք ընկալման արդյունքում ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային իրավունքի նորմերով ամրագրված ինստիտուտներին տրված է անհարկի սահմանափակ մեկնաբանություն, ինչի արդյունքում իրավունքների սահմանափակման հիմքերը մեղացվում են, սակայն սպառնալիք է ստեղծվում հանրային շահերի արդյունավետ պաշտպանության տեսանկյունից: Այսպես, Սահմանադրության 44-րդ հոդվածը ամրագրում է օրենքով սահմանված կարգով մարդու և քաղաքացու առանձին իրավունքների և ազատությունների, բացառությամբ 15, 17-22 և 42-րդ հոդվածներով սահմանվածների, ժամանակավորապես սահմանափակման հնարավորություն ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորությունների շրջանակներում: Տվյալ դեպքում, ընթացիկ օրենսդրությունում «արտակարգ դրություն» եզրույթին անհարկի տրվել է սահմանափակ մեկնաբանություն, ինչի արդյունքում դրան զուգահեռ ներմուծվել է մեկ այլ եզրույթ՝ «արտակարգ իրավիճակ», որը, ըստ էության, արտակարգ դրության բաղադրիչ լինելով հանդերձ, օրենսդրությամբ ամրագրվել է իբրև էականորեն տարբեր իրավական ռեժիմ՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ:

Այսպես, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածում «արտակարգ իրավիճակ» եզրույթին տրված է հետևյալ բնորոշումը. «Ռոտշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երեւույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետեւանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա. Վաղարշյանի/. - Եր.: «Իրավունք», 2010, էջ 269:

մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման»։ Դժվար չէ նկատել, որ սույն բնորոշումը լիարժեքորեն համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերով ամրագրված «արտակարգ դրություն» եզրույթին:

Ի դեպ, վերը նշված օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետից բխում է, որ միայն Կառավարությունն է օժտված աղետի գոտի հայտարարելու լիազորությամբ, ինչն նույնացվում է արտակարգ վիճակ հայտարարելու հետ և հիմք է դրանով պայմանավորված իրավական ռեժիմ կիրառելու համար:

Այն, որ միջազգային իրավունքի նորմերով բնական աղետը ևս «արտակարգ դրություն» եզրույթի բաղադրիչ է, բխում է ինչպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի, այնպես էլ 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածի դրույթներից: Բնորոշ է, հատկապես, հիշյալ Գաշնագրի 4-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 29 ընդհանուր մեկնաբանության հետևյալ հատվածը. «Մարդու իրավունքների կոմիտեն գտնում է, որ ոչ բոլոր խռովությունները կամ *աղետները* (ընդգծումը մերն է) պետք է որակվեն որպես ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն: ...Այս պահանջը վերաբերում է արտակարգ դրության տևողությանը, աշխարհագրական սահմաններին և նյութական շրջանակին»¹:

Հավելենք նաև, որ արտակարգ դրության հիշյալ մեկնաբանությունն իր արտացոլումն է գտել նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի առնչությամբ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերում²:

Ի դեպ, բազմաթիվ երկրներում այդպիսի տարանջատում գոյություն չունի: Օրինակ՝ ՌԳ-ի 2001թ. մայիսի 30-ի «Արտակարգ դրության մասին» Օրենքում արտակարգ դրությունը փոխկապակցվում է ոչ միայն պատերազմի, այլև բնական, բնապահպանական կամ տեխնիկական բնույթի աղետների հետ:

¹ Տե՛ս General Comment № 29 – States of Emergency (article 4), CCPR/C/21/Rev.1/Add. 11, 31 August 2001.

² Տե՛ս, օրինակ Ireland v.the United Kingdom, Judgment of 18 January 1978, Aksoy v.Turkey, Judgment of 18 December 1996 և այլն:

Արտաքուստ կարող է այն տպավորությունն ստեղծվել, որ ընթացիկ օրենսդրությամբ փորձ է արվել անհարկի չընդլայնելու սահմանափակումների շրջանակը, սակայն դրանով էլ ավելի է խոցելի դարձել ոչ միայն հանրային շահերի, այլև հենց անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Նախ, ինչպես նշվեց, արտակարգ իրավիճակ հայտարարում է կառավարությունը, ինչն ակնհայտ պարզեցված ընթացակարգ է և չի ուղեկցվում անհրաժեշտ երաշխիքներով: Մինչդեռ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ արտակարգ դրության դեպքում իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումը կարող է իրականացվել բացառապես ՀՀ Նախագահի հրամանագրով: Ընդ որում, վերջինս պարտավոր է այդպիսի հրամանագիր արձակելուց առաջ խորհրդակցել Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, որից հետո անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ: Բացի այդ, առանց որոշ իրավունքների և ազատությունների սահմանափակման պարզապես հնարավոր չէ ապահովել բնական աղետի կամ այլ երևույթներով պայմանավորված արտակարգ դրության ընթացքում հանրային շահերի և անհատ անձանց իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը:

դ) Ընթացիկ օրենսդրությամբ համարժեքորեն լուծված չէ նաև առանձին պաշտոնյաների համար Սահմանադրությամբ ամրագրված անձեռնմխելիության ինստիտուտից բխող դրույթներ սահմանելու խնդիրը: Ակնհայտ է, որ անձեռնմխելիության ինստիտուտի և որևէ եղանակով իրավական արտոնյալ կարգավիճակի վերաբերյալ դրույթները կարող են համահունչ լինել Սահմանադրությամբ ամրագրված իրավահավասարության սկզբունքին միայն այն դեպքում, երբ դրանց իրավական հիմքը բացառապես Սահմանադրությունն է:

Այս եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն, որ հենց երկրի հիմնական օրենքն է տարբեր իրավական եղանակներով կոչված ապահովելու անձանց իրավական կարգավիճակի անհրաժեշտ իրավական հավասարակշռությունը: Եթե անգամ Սահմանադրությանը որոշ անձանց վերապահվում է արտոնյալ անձեռնմխելիություն, ապա դա չի հանգեցնում իրավահավասարության խախտման, քանզի վերջինս դիմում է այդ բացառիկ միջոցին միայն այն դեպքում, երբ դա բխում է իշխանության ներկայացուցիչ տվյալ պաշտոնյայի համար Սահմանադրության ոգուն համապատասխան բնականոն կարգավիճակ ապահովելու շահերից: Սահմանադրությամբ չնախատեսված ցանկացած այլ չա-

փանհիշով այս կամ այն պաշտոնյային լրացուցիչ անձեռնմխելիություն վերապահելը հանգեցնում է այլոց նկատմամբ անհիմն արտոնյալ կարգավիճակ ձեռք բերելուն, որի արդյունքում խախտվում է իրավահավասարության սկզբունքը: Ընդ որում, արտոնություններ սահմանելու եղանակով հիշյալ սկզբունքի յուրաքանչյուր խախտում հանգեցնում է այլ անձանց իրավունքների ուղղակի սահմանափակման, քանզի վերջիններս զրկվում են օրենքի առջև հավասար հիմքերով հանդես գալու փաստացի հնարավորությունից:

Այլ կերպ ասած, ընթացիկ օրենքներով Սահմանադրությամբ չնախատեսված անձանց արտոնյալ անձեռնմխելիություն վերապահելը չի բխում Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված այն դրույթից, ըստ որի. «Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ»: Այս դեպքում օրենքները ոչ թե սահմանում են լրացուցիչ իրավունքներ կամ ազատություններ, այլ ըստ էության խախտում են Սահմանադրությամբ կանխորոշված հավասարակշռությունը:

Ամփոփելով իրավունքների և ազատությունների սահմանափակման արդի հիմնախնդիրների առնչությամբ մեր նկատառումները՝ նպատակահարմար են գտնում այդ հարցադրումների առնչությամբ տեսական բանավեճերի ու մոտեցումների վերաբերյալ նյութը հասանելի դարձնել ոչ միայն իրավաստեղծ ու իրավակիրառ ոլորտի, այլև ուսումնական գործընթացի պատասխանատուների համար:

Gevorg Danielyan
Board President of the “ Constitutional Law Centre”,
Advisor to the Constitutional Court of the Republic of Armenia
Doctor of Legal Sciences, Professor

MODERN ISSUES OF LIMITATION OF THE RIGHTS AND FREEDOMS

In the article “Modern problems of limitation of Rights and freedoms” are introduced the recently new concepts and conclusions on mentioned law institute. In particular, according to one of the presented conclusions, it is necessary to distinguish from each other the following two concepts:” the limitation of rights” and “limit of implementation of right”. At the same time, by the author of the article the constitutional provisions of the “limitation of rights” are addressed directly to the State, as concern to the “limits of implementation of right” it is addressed to citizens and legal entities.

In article are discussed a number of legislative, as well as constitutional provisions related to the law technique, which are stand in the way of systematic legal regulations and formation of the adequate law culture. In article were presented the arguments and ways of review for those provisions. For author it is unacceptable that in law theory, as well as in law sources took place the prohibited identification of different and far from each other legal notions, in result of which we faced to disorder, which is an obstacle to form relevant law system. So, according to author, it could be applicable to the identification in current legislation of two concepts: “state of Emergency” and “extraordinary situation”, due that took place a lot of misunderstanding in legislation.

The author is arguing to review theoretical positions on accordance of the current legislation related to the Constitution and to make them on line with new challenges of the Constitutional Justice.